Փոթորիկ Հայաստանում եւ Նախիջեւանում

Անցած կիրակի Նախիջեւանի ինքնավար հանրապետության երեք շրջաններ ենթարկվեցին կործանարար փոթորկի: 20 ժամ շարունակվող քամու ուժգնությունը հասնում էր վարկյանում 30 մետրի: 150 ընտանիքներ մնացին անօթեւան:

Նախնական հաշվարկների համաձայն, հանրապետությանը հասցված վնասները հասնում են միլիոնների: Ստեղծվել է աղետի հետեւանքների վերացման պետական հանձնաժողով: Այդ նույն մրրիկն այնտեղ անցել է Հայաստան: Աշոցքի շրջանում վնասվել են որոշ անասնապահական օբյեկտներ: Քամին պոկել է բնակելի տների եւ այլ շենքերի տանիքները: Վնասվել են ջրատարը, կոյուղին, ջեռուցման համակարգը:

Աշոցքի շրջանում ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որը տեղում պարզում է հասցված վնասի մասշտաբները: